

Գ. ԱՄԵՐԻԿԱ

# ՅԵՐԿՈՒ ՍԻՐԸ



ՊԵՏՐՈՍ 1933 ՅԵՐԵՎԱՆ

89 0.12 AUG 2013

61 - 61

5085

30 MAY 2011




59307-66

Պատ. Խմբագիր Հ. Արամ  
Թարգմանիչ Ա. Վազգյան  
Ակ. Վ. ի պ ի ն

Սրբագրեց Դար. Հակոբ լուսն

Գհահրատի տպարան, Յերևան, պլավլիտ №8325 (ը), պատվեր №2161, տիրած 4000, հանձնված է արտադրության 20 հոկտեմբերի 1933թ. ստորագրված և տպելու 3 նոեմբերին 1933թ.



Ամուսն արեւը շատ տաք և  
Ողեսնայում:

Փողոցներով վոտարոբիկ ան-  
հար և քայլել. նույնիսկ չստե-  
րի տակի կաշիներն ալրվում են:

Ահա և իրիշկան մայթերի վրա՝  
մի վոտքից մյուս վոտքի վրա  
թուշկուում եւ:


Բայց լեռը նրբանցքը վերջա-  
ցավ, նա կանգ առավ:

Յեզ աջ կողմը, և ձախ կողմը,  
և ներքե, վոտքերի տակ, և վերե,  
մինչև յերկնքի յեզերքը—ամբող-  
ջովին ջուր եւ:

Այսքան մեծ և ծովը...

— Հո-հո-հո — կանչում և իրիշ-  
կան և թափահարում թերը ծո-  
վի ժայռի վրա կանգնած:

Ժայռի տակ մի քանդված տուն  
կա, պատշգամբով, յերկու «յու-  
նով» ու դունով. Տան շեմքեց քիշ  
հետու աղյուսներ և աղք և թափ-  
ված: Մի գեղնավուն շուն փոր-  
փըլում և աղբը:



Անցյալում, յերբ դեռ Իրիշկան չեր ծնվել, այս ծովի վրա ոտար, վոչ խորհրդային նավեր ելին լողում և կը ակում եյին չուզունե սկ թնդանոթներից. Նրանք քանդեցին այս տունը և ուրիշ շատ ժամաներ տվին:

Ծովը փրփրում է, և յերեսում ե հետքը մի փոքրիկ սպիտակ նավի, վորը անփնտերով ցըռում ե ջուրը և շտապում:

Հեռու-հեռու լողում են նավակները:

— Կամաց, — ասում ե մայրը, — վայր կընկնես, ջարդ ու փշուր կլինես: Ահա ճամպան:

Ներքեմի ճամպով անցնում ե ալծերի հոտը:

— Ուղենամ ախպես կցատկեմ, այնպես կթռչեմ — կթռչեմ կանցնե՛եե՛մ:

Յեզ Իրիշկան սրընթաց ցած ե վազում:

Հրաշք: Վոտքերն ավելի և ավելի արագ են վազում:

Իրիշկան գնդակի պես ցած ե գլորվում, չի կարողանում շունչ քաշել. չի կարողանում կանդ առներ

Սարսափելի յեւ.

Յեզ ահա Իրիշկայի վրա յեն գալիս այծերը. մի սպիտակ փոքրիկ ուլ նրա վոտքերի տակ ե ընկնում, և հանկարծ Իրիշկան պառկում ե նրա միջքին:

— Վահաա՛յ... ինչքան բարձր սար եր... յերբեք մտքովս չեր անցնի, — և Իրիշկան շունչ ե քաշում:

Իսկ կըծքում ինչ վոր բան ե թպրտում արագ-արագ և խփում ե թիկ-թակ, թիկ-թակ:

— Վայ մամա, ինչ վոր բան թպրտում ե այ, այտեղ:

— Այ անխելք, չե վոր ալդ քո սիրտն եւ:

— Իսկ ինչու յե այնպես խփում:

— Նա միշտ ել խփում ե, միայն թե կամաց և հավասար, ինչպես իմ ձեռքի ժամացույցը: Իսկ վազելուց և շոգից արյունդ յեռում ե, և սիրտդ ել սկսել ե ոտեղ և արագ խփել

— Դու ել սիրտ ունես:

— Իհարկե, — ասում ե մայրը և զրկում իրիշկային: — Լսում  
ես՝ ինչպես ե խփում: Բոլոր մարդիկ ել սիրտ ունեն: Քանի դեռ  
մարդը կենդանի լե, սիրտը խփում ե, իսկ յերբ մեռնում ե, սիրտը  
դադարում ե խփելոց:

— Ինչու յե դադարում:

— Հոգնում ե: Մաշվում ե:

— Լավ բան ե, — զարմանում ե իրիշկան, — կոտրվել ե  
կարող ե:

— Կարող ե, յերբ նրան չպահպանես՝ կկոտրվի:

Արեն այրում ե իրիշկայի բաց գլուխը:

Թաշկինակը նրա գլուխց վայր եր ընկել և թավալում եր ճամպին:

Իրիշկան բարձրանում ե քարերի վրայով, վոր թաշկինակը  
վերցնի. պետք ե շողից սիրտը պահպանել, — մտածում ե նաև իսկ  
սպիտակ ուլը գնում ե նրա հետեւից. ականջներն ե շարժում,  
գլուխն ե թափահարում, լեզուն ե հանում:

— Մը-մը-ը-ը...

— Վերցնենք այծիկին, նա կաթ կտա մեզ:

— Փոքրիկ ե, նոր ե ծնվել: Նա զեռ մոր կաթովս ե մնվում,  
Մոտենում ե այծը՝ լղար, լերկարամագ: Մկկում ե, մկկում և  
ուլիկին տանում:



Մայրը քարերի տակ մի հով տեղ ե վնարում, իսկ իրիշկան  
գնում ե տղիզ գեղի ծովի կողմը:

Սղիքը բարձրանում ե, վազում, թռչում ե գեղի իրիշկան՝ ահա  
տակով կանի: — Յեվ հանկարծ, հենց իրիշկայի քթի տակ, ալիքը  
ցրվում ե, քրքջում և միայն վոտքերն ե խուռառում: Յեվ նորից:  
նորից ու նորից...

Այ-այ-այ, — գլուխն որորում ե իրիշկան: — Այ շարաձճի,  
դու այդ բորբը դիտմամբ ես անում...

Մամ, նստացըու ինձ ծովի միջի  
քարին — իսա խեչափարներին կնայիմ:

Խեչափարները քարերի արանքում  
սողում են զեղի ջրի խորքերը: Զան-  
շերը շարժում:

Մամ, խեչափարներն ել սիրտ ունեն:

Չի պատասխանում, պառկել ե հո-  
գին և աչքերը փակեր:

Դե, ջրի միջով զեղի ափ, վորպեսզի  
խեչափարները վոտքեցդ չբանեն:





— Մամ, դու քնած ես, թե՞ մեռել ես...  
Նստում ե և գլուխը դնում մոր կրծքին:  
Կենդանի յե: Սիրտը խփում ե սովորականի պես: Հենց ալն-  
պես քնել ե:

Ավազի, մանրիկ քարերի ու խեցիների վրա Իրիշկան ել և  
տեղափորվում:

Խոկ բարձի փոխարեն, զլուխը մոր վրա յե դնում:

Շը՞ շը՞ ֆի, — լսում ե թիակների ձայնը:

Սոտենում ե մի կանաչ նավոկ:

Զկնորմներն սպիտակ գլխարկներով, սև տրուսիկներով, նա-  
վակն ափ են դուրս հանում:

Ծովի ծայրին ծուխ ե լերեւմ:

Մեծ ե ծովը... և յոդի հոտ ե փշում:

Թը՞ ֆ:

Մալրիկի փորի մեջ, ուղղակի Իրիշկայի ականջի տակ, ինչ  
վոր բան ե շարժվում:

Գուցե սիրտն ե:

Վոչ, սիրտը պետք ե ժամացույցի պես խփի, խոկ սա շարժվեց  
ու լուց:

Մայրիկի սիրտը կրծքում ե — միթե նա կարող ե ճամպորդել:

— Մամ, — արթնացնում ե Իրիշկան, — արթնացիր:  
Քո մեջ ինչ վար բան ել ե շարժվում: Զլինի թե դու յերկու  
սիրտ ունես: Ինչի՞դ ե պետք այդքանը:

Մալրն արթնանում ե և ծովին ե նալում:

— Կուզելի՞ր յեղբալր ունենալը

— Դե, — ասում ե Իրիշկան, — յեղբալրը հո փողոցում ընկած  
չի: Ավելի չափ կլինի ասես, թե ինչ ե այնտեղ շարժվում:

Այն ժամանակ մալրն ասում ե:

— Իհարկե՝ հիմա յես յերկու սիրտ ունեմ. մեկը՝ իմը, միուսը  
յերեխալինը: Այդ նա յե շարժվում: Խոկ նրա սիրտն ալնքան փոքր  
ե, վոր խփոցը չի լսում: Նա դեռ փոքր ե, ալ, ալսքան ե, նա  
իմ փորի մեջ ե մեծանում, ինչպես սերմը՝ հողի մեջ: Յերբ մեծանա,  
ամրանա — դուրս կզա, կծնվի, կապըի, փոքրիկ մարդ կդառնա:

— Յես ել այդպես ելի:

— Այն: Բոլոր յերեխաներն ել ալդպես են լինում:


— Ուլիկն ել:

— Ուլիկն ել:

— Դու եր:

— Յես եր:

— Հա-ա... — ասում ե Իրիշկան և մտածում ե, մտածում:



— Իսկ նա այստեղ ինչպես չի խեղդվում։  
— Ինչպես վոր ձեներն ու խեցգետինները չեն խեղդվում ջրի  
մեջ, նրա համար ել այստեղ ամեն ինչ հարմարեցրած ե։ Նա ինձ  
հետ միասին ե շնչում, իմ սննդով և սնվում։  
— Դժվար չի քեզ համար, — հարցնում ե Իրիշկան։  
— Քանի գեռ փոքր ե — վոչինչ իսկ յերբ մեծանա, կծանրա-  
նա և դժվարա կլինի շարժել նրան։  
Յես գիտեմ, — ասում ե Իրիշկան, — վոր դրա համար ել զու-  
դանդաղ ես քալում, չես վազում, վորպեսզի նրա սիրտը չկո-  
տրվի։  
— Այս, իհարկե, փորպեզի չվասպիս թե չե՝ հիվանդ կծնվի։  
Բայց պետք ե առողջ ծնվի։  
— Այս, իհարկե։ Անպատճառ։  
Սովոր վրա ել վաշ մի նավակ։  
Սովոր փոյլում ե ապակու պես։  
Զկնորմները բարձրանում են սարը։  
Քարերի ստվերներն ավելի լեն փոքրանում։  
Ճաշի ժամանակ ե. գնանք։  
Յեզ նույն ճամպով զեպի վեր զնացին։  
— Կամաց քալիք, — ասում ե Իրիշկան և ճամպից քարերն ե  
հեռացնում, — թե չե հիվանդու կծնվի։  
Իսկ վերեւում, նրբանցքում, մայրը ձեռից ամուր բանել ե,  
փորպեսզի ձիու վոտքերի տակ շընկնի, կամ վոտքը քարի շղիպչ։  
Հանգստյան տանը խփում են ճաշի զանդը։  
Ճաշարանի դռան մոտ նրանց են հասնում մի խումբ կոմ-  
յերիտականներ. վալեր-բոլի գնդակով խաղաղաշտից են զալիս և  
ուրախ հրում են միմյանց։  
Իրիշկան տարածում ե ձեռքերը, կտրում ե ճամպան։  
— Կամաց, — բացականչում ե նա, — մայրիկին զետին չպցեք։  
Նա լերեխա ունի. Փոքրիկի սիրտը կարող ե կոտրվել։  
Յեզ նրա սիրտն ուժեղ թպրտում ե։  
Վախից ե, թե՝ շոգից։  
Ամուն արեց շատ տաք և Ոդեսայում։  
Սովոր ել այնքան մեծ ե...»



50.85

ԳԻՆԸ 1 Ա.

ՏԱՐ

ՆԱԽԱՇԴՊՐՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅԱՐ



891. 715  
U-61

ԹԻՍ ԾԱԼԱԿ ՃՐԱՎԻ